Գրիգորի՝ որոց գլխաւորքն էին Մինաս վարդապետ Կարնեցի, Յովհաննէս եպիսկոպոս Եղնկացի՝ տեղապահ Գրիգորի, շարժեալ 'ի չար նախանձուէ՝ հակառակ կացին Արիստակէս վարդապետի՝ քահանայից և ժողովրդոց Պալատու, և ջանային ցրուել զմիաբանութիւնս նոցա, խափանել զչինութիւն եկեղեցւոյն՝ եւ հալածել զԱրիստակէս վարդապետ, որ թագուցեալ կայր 'ի Ղալաթիա։ Ի սոյն աւուրս եհաս անդ յերուսաղէմ Գրիգոր Պատրիարք Պարոն Տէր կոչեցեալ. իբրեւ լուան քահանայք եւ ժողովուրդք Պալատու զգալուստ Նորին, մեծ և փոքր առհասարակ գնացին ընդ առաջ Նորա 'ի յարգանս 'ի Խրուսուպոլիս՝ այն է Իւսկիւտար, և 'ի նմին պահու ձայն բարձեալ գոչէին և չարախօս լինէին զՅովհաննէս եպիսկոպոսէ, եւ Սուլու Մանասարցի Խաչատուր երիցուէ, (ոնց ուռեցաւ եւ խափանեցաւ) ասէ նա ինքն Գրիգոր, եւ յորժամ էանց Պատրիարքն 'ի Խաս գիւղ, եկն առ նա Յովհաննէս եպիսկոպոս յողջոյն և 'ի տեսութիւն, զի յառաջագոյն աշակերտեալ էր նմա, և Նորա բացեալ զբերան իւր սատակագոյնս կշտամբեալ յանդիմանեաց զնա նախատական բանիւք, որպէս ինքն ասէ (ամօթ երեսաց իւրոց ծածկեաց զինքն, և տխրեալ դիմօք եկ և գնաց)։

Յետ այնորիկ սկսաւ Գրիգոր Պատրիարք յորդորական բանիւք քաջալերել զժողովուրդն ձեռն արկանել 'ի չինութիւն եկեղեցւոյն Հրեշտակապետի։ Գլուխ և վերատեսուչ կացին գործոյն ինքն և Արիստակէս վարդապետ, ջանիւք և աշխատութեամբ կատարեցին զայն, և արարեալ զհանդէս նաւակատեաց օրհնեցին զնա։ Եւ Արիստակէս մեկնեալ անտի գնաց 'ի կողմանս Բիւթանիոյ։ Սակայն տունք Հրէից կարի մերձ էին յեկեղեցին, և ըստ ազատղի սովորութեանց նոցին բուրէր դարշահոտութիւնք նոցա 'ի զզուանս ժողովրդոց, եւ երբեմն նախատէին իսկ զկրօնս քրիստոնէից և զեկեղեցին։ Էր անդ նաեւ տուն մեծ և բարձր քան զեկեղեցին՝ առն ուրումն մեծատան յազգէ Յունաց, և սա եւս ատելութեամբ գնայր ընդ ազգին սակս եկեղեցւոյն, և առաւել վատթարագոյն գտեալ քան զՀրէայսն, տայր արկանել 'ի վերայ եկեղեցւոյն զաւելորդս կերակրոց եւ այլոց իրաց իբրեւ յաղբիւս։ Եւ զկնի աւուրց ինչ պատա-